Digitally signed by
AVANESYAN ANAHIT 7011850163
Date: 24.06.2025 11:11:58

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 10-06-2025 թ. որոշմամբ
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԶԱՔԻՅԱՆ Փ. ԹԻՎ 7-3
1.3 Պետական գրանցման համարը		222.160.68143
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2012-02-09
1.5 ՀՎՀՀ-ն		02605266
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10606609
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		advocates.academy
1.8 Էլեկտրոնային փոստը		info@advocates.academy
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
ՀՀ փաստաբանների պալատ		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արա Զոհրաբյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	26	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Բանկային տոկոսներ	3,115,013
	Փոխհատուցման գումարներ	539,368
	Ավանդի մարում	35,000,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Ուսուցում	233,866,750

9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	264,347,063	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը		

Նշումներ՝

Տարվա ընթացքում ստացված 233,866,750 ՀՀ դրամ ուսուցման գումարները գոյացել են հավակնորդների քննության վճարներից և ունկընդիրների ուսման վարձերից (այդ թիվը չի արտահայտում հարկային իմաստով եկամտի չափը, քանի որ վերջինս գոյանում է ծառայության մատուցման պահին): Տարվա ընթացքում օգտագործված միջոցները կապված են ՀՀ փաստաբանական ակադեմիայի կողմից իրականացվող գործունեության հետ և չեն հանդիսանում ծրագրային ծախսեր:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 28 էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

audit pro

Աուդիտ Պրո ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան
Խորենացի 26ա

+(374) 12 222 322
www.auditpro.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքն ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով 2024թ. հունիսի 26-ին արտահայտել է չձևափոխված կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք, արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության սկզբունքի կիրառումը:
- գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձություններն այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

30 ապրիլի 2025թ.

«ԱՈՒԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ

Արսեն Խաչատրյան

Տնօրեն/Աուդիտի ղեկավար

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ փաստաբանական ակադեմիա» հիմնադրամ
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2024թ.	31.12.2023թ. Վերաներկայացված
		հազար դրամ	հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	9,838	14,537
Ոչ նյութական ակտիվներ	5	13,735	19,797
		23,573	34,334
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	6,749	3,001
Ընթացիկ ֆին. ներդրումներ	7	32,516	37,953
Դրամական միջոցներ	8	9,977	1,802
		49,242	42,756
		72,815	77,090
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Կուտակված արդյունք		(31,920)	(13,930)
		(31,920)	(13,930)
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	9	9,849	18,933
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	10,163	8,905
		20,012	27,838
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	84,723	63,182
		84,723	63,182
		72,815	77,090

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ փաստաբանական ակադեմիա» հիմնադրամ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծնթ.	2024թ.	2023թ. Վերաներկայացված
		հազար դրամ	հազար դրամ
Հասույթ	12	188,290	155,901
Վաճառքի ինքնարժեք	13	(100,809)	(90,031)
Համախառն շահույթ		**87,481**	**65,870**
Այլ եկամուտ	14	9,761	9,584
Իրացման ծախսեր	15	(14,262)	(13,579)
Վարչական ծախսեր	16	(93,498)	(80,257)
Այլ ծախսեր	17	(8,411)	(1,789)
Այլ ոչ գործառնական օգուտ/(վնաս), զուտ		(482)	(249)
Ֆինանսական եկամուտ		2,679	2,961
Շահույթ մինչև հարկումը		**(16,732)**	**(17,459)**
Շահութահարկի գծով ծախս	18	(1,258)	(2,389)
Տարվա զուտ շահույթ		**(17,990)**	**(19,848)**
Այլ համապարփակ եկամուտներ			
Տարվա համապարփակ		**(17,990)**	**(19,848)**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2025թ. փետրվարի 19-ին:

Արա Զոհրաբյան
Ռեկտոր

Անահիտ Ավանեսյան
Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ փաստաբանական ակադեմիա» հիմնադրամ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	2024թ.	2023թ.
	հազար դրամ	հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վաճառքից/ծառայություններից մուտքեր	233,867	178,153
Գործառնական այլ մուտքեր	539	489
Գնումների դիմաց վճարումներ	(39,842)	(38,322)
Վճարումներ աշխատակիցներին	(108,560)	(93,215)
Վճարումներ հարկերի և այլ վճարների գծով	(66,707)	(54,974)
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	(11,183)	(7,091)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	8,114	(14,960)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռք բերման գծով վճարումներ	(8,054)	(13,508)
Փոխառությունների տրամադրում/(մարում), զուտ		
Ավանդների գծով ներդրումներ/(մարում), զուտ	5,000	(35,000)
Ստացված տոկոս	3,115	11
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	61	(48,497)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	-
Դրամական միջոցների զուտ հոսքեր	8,175	(63,457)
Փոխարժեքային տարբերություններ		4
Դրամական միջոցները տարեսկզբի դրությամբ	1,802	65,255
Դրամական միջոցները տարեվերջի դրությամբ	9,977	1,802

ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ փաստաբանական ակադեմիա» հիմնադրամ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Կուտակված շահույթ	**Ընդամենը**
	հազար դրամ	հազար դրամ
Մնացորդն առ 1 հունվարի 2023թ.	2,832	2,832
Նախորդ տարիների սխալների ուղղում	3,086	3,086
Վերաներկայացված մնացորդ առ 1 հունվարի 2023թ.	5,918	5,918
Տարվա շահույթ (վնաս)	(19,848)	(19,848)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	(13,930)	(13,930)
Տարվա շահույթ (վնաս)	(17,990)	(17,990)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.	(31,920)	(31,920)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

1.1. **Նկարագիր և գործունեություն**

«Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություն է, որը հետապնդում է գիտական, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամը ստեղծվել է 2012թ. փետրվարի 9-ին՝ ՀՀ փաստաբանների պալատի կողմից:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Զաքյան փ. 7-3 շենք, որտեղ տեղակայված է Հիմնադրամի վարչական գրասենյակը:

Հիմնադրամը գործում է ՀՀ ողջ տարածքում և չունի մասնաճյուղեր:

Աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ. կազմել է 21 անձ, 2023թ. նույնպես կազմել է 21 անձ:

Հիմնադրամի հիմնական նպատակներն են Հայաստանի Հանրապետությունում՝

- Ապահովել Փաստաբանական ակադեմիայի ունկնդիրների որակավորման ուսուցումը և փաստաբանների շարունակական մասնագիտական վերապատրաստումը.
- Ապահովել Փաստաբանական ակադեմիայի ունկընդիրների համար անցկացվող որակավորման քննությունների անցկացումը.
- Նպաստել ՀՀ փաստաբանական ինստիտուտի զարգացմանը, փաստաբանների մասնագիտական կարողությունների կատարելագործմանը և փաստաբանի դերի բարձրացմանը.
- Համալրել ՀՀ փաստաբանների պալատը մասնագիտորեն պատրաստված անդամներով.
- Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված այլ նպատակներ:

Հիմնադրամի միակ հիմնադիրը ՀՀ փաստաբանների պալատն է:

1.2. **Կառուցվածք և կառավարում**

Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է:
Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը՝

- **Սիմոն Բաբայան**՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահ, ի պաշտոնե
  Խորհրդի նախագահ
- **Նիկոլայ Հակոբյան**՝ փաստաբան
  Խորհրդի անդամ
- **Տիգրան Խուրշուդյան**՝ փաստաբան
  Խորհրդի անդամ
- **Լեոնիկ Հովհաննիսյան**՝ փաստաբան
  Խորհրդի անդամ
- **Լյուդվիգ Դավթյան**՝ իրավաբան գիտնական
  Խորհրդի անդամ
- **Նազելի Սուքիասյան՝** իրավաբան գիտնական
  Խորհրդի անդամ
- **Արտյոմ Սուջյան**՝ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ
  Խորհրդի անդամ

Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հիմնադրամի Ռեկտորը:

2. **Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները**

2.1. **Համապատասխանություն**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համապատասխան:

2.2. **Անընդհատության հիմունք**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով:

2.3. **Չափման հիմունքները**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.4. **Ֆունկցոնալ և ներկայացման արժույթ**

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (այսուհետ՝ Դրամ): Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

3. **Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները**

3.1. **Արտարժույթով գործառնություններ**

Արտարժույթով գործառնությունը <u>սկզբնապես ճանաչման պահին</u> հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:
Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը՝

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	31.12.2024թ.
	ՀՀ դրամ
1 ԱՄՆ դոլար	396.56
1 Եվրո	413.89
1 Ռուբլի	3.71

<u>Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝</u>
ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.
բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և
գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:
<u>Փոխարժեքային տարբերությունները</u>, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

3.2. **Հիմնական միջոցներ**

<u>Ճանաչում և չափում</u>
Հիմնական միջոցների հոդվածները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստը:
Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղակիորեն վերագրելի ծախսումները:

Երբ հիմնական միջոցը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին հոդվածներ (նշանակալի բաղադրիչ):
Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված օգուտը և վնասը ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:
Հետագա ծախսումներ
Հիմնական միջոցների հոդվածի բաղկացուցչի փոխարինման ծախսումները ճանաչվում են հոդվածի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարելուն պես:
Մաշվածություն
Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ մաշվածության ծախսումները ներառվում են այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ հիմնական միջոցը մատչելի է օգտագործման համար: Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ ժամանակաշրջանի համար հետևյալն են.

Համակարգչային տեխնիկա	1-3 տարի
Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Արտադրատնտեսական գույք	5-8 տարի

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

3.3. **Ոչ նյութական ակտիվներ**

Ճանաչում և չափում
Հիմնադրամի կողմից ձեռքբերված ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:
Ամորտիզացիա
Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:
Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ ժամանակաշրջանի համար հետևյալն են.

Ուսումնական և համակարգչային ծրագրեր	10 տարի
Ինտերնետային կայք	10 տարի

3.4. **Պաշարներ**

Հիմնադրամը պաշարները չափում է ինքնարժեքով: Ծառայությունների ինքնարժեքը հաշվարկվում է փաստացի կատարված արտադրական ծախսումների հանրագումարով (փաստացի ինքնարժեք):
Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևով:
Հիմնադրամը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է՝ արդյոք պաշարներն արժեզրկված են, թե՝ ոչ: Եթե պաշարների որևէ հոդված (կամ համանման հոդվածների խումբ) արժեզրկված է, Հիմնադրամը նվազեցնում է պաշարի (կամ խմբի) հաշվեկշռային արժեքը՝ այն հասցնելով դրա վաճառքի գնին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները: Այդ նվազումը արժեզրկումից կորուստն է և անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:
Վաճառված կամ այլ ձևով հատուցման դիմաց օտարված պաշարների հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:
Պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս ժամանակաշրջանում, երբ առաջացել է կորուստը:

3.6. **Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ**

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամիը մատուցել է ծառայություն, Հիմնադրամը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Հիմնադրամը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Հիմնադրամը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Հիմնադրամը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Հիմնադրամը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

3.7. **Պահուստներ**, **պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ**

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) Հիմնադրամն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Զեղչման դրույքը (կամ դրույքները) պետք է լինի այն դրույքը (կամ դրույքները)՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.8. **Հասույթ**

<u>Հասույթի ճանաչում</u>

Հիմնադրամը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Հիմնադրամը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Հիմնադրամը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

<u>Գործարքի գին/հարկեր</u>

Գործարքի գինը հատուցման այն գումարն է, որը Հիմնադրամը ակնկալում է ստանալ, որպես փոխանակում, գնորդին խոստացված ապրանքները կամ ծառայությունները փոխանցելու դիմաց,

բացառությամբ երրորդ անունից հավաքագրված գումարները (օրինակ՝ վաճառքի որոշ հարկերը):
Հիմնադրամը ավարտվածության աստիճանով որոշված հասույթի նկատմամբ հաշվարկում է հարկային նպատակով դեռևս չառաջացած ԱԱՀ-ն՝ ներկայացնելով այն ֆինանսական հաշվետվություններում որպես կրեդիտորական պարտք:
Ուսման վարձերից հասույթի ճանաչում
Հասույթը հիմնականում առաջանում է ուսման վարձերից, որոնց մասով օրացուցային օրերով հաշվարկվում է ավարտվածության աստիճանը և համաձայն վերը նշված պայմանի, լրիվությամբ ճանաչվում է դեբիտորական պարտք:
Քննության մասնակցության վճարներից և այլ ուսումնական ծառայություններից հասույթի ճանաչում
Քննության մասնակցության վճարներից և այլ ուսումնական ծառայություններից հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում դուրս գրված հաշիվ ապրանքագրերի հիման վրա:

3.9. **Շնորհներ**

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:
Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:
Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.10. **Շահութահարկի գծով ծախս**

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:
Ընթացիկ շահութահարկը (հարկը) ընթացիկ ժամանակաշրջանի կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթի գծով վճարման ենթակա հարկ է:
Հետաձգված շահութահարկը (հարկը) ապագա ժամանակաշրջաններում վճարման կամ փոխհատուցման ենթակա հարկ է, որը սովորաբար Հիմնադրամի կողմից իր ակտիվներն ու պարտավորությունները ընթացիկ հաշվեկշռային արժեքով փոխհատուցելու կամ մարելու արդյունք է, ինչպես նաև տվյալ պահին չօգտագործված հարկային վնասները հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հարկային հետևանք:
Հիմնադրամը ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթից վճարվելիք հարկի գծով ճանաչում է ընթացիկ հարկային պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարվելիք գումարը, Հիմնադրամը այդ գերազանցող մասը ճանաչում է որպես ընթացիկ հարկային ակտիվ:
Հիմնադրամը ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունը (ակտիվը) չափում է այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի հարկային մարմիններին (կփոխհատուցվի հարկային մարմինների կողմից)՝ կիրառելով հարկերի դրույքները և հարկային հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել մինչև հաշվետու ամսաթիվը:
Հիմնադրամը ընթացիկ հարկային պարտավորության կամ ընթացիկ հարկային ակտիվի փոփոխությունները ճանաչում է շահույթում կամ վնասում՝ որպես հարկի գծով ծախս:
Հիմնադրամը ապագա ժամանակաշրջաններում՝ որպես անցյալ գործարքների կամ դեպքերի արդյունք, փոխհատուցվելիք կամ վճարվելիք հարկի համար ճանաչում է հետաձգված հարկային ակտիվ կամ հետաձգված հարկային պարտավորություն:
Հիմնադրամը հետաձգված հարկային պարտավորության կամ հետաձգված հարկային ակտիվի փոփոխությունները ճանաչում է շահույթում կամ վնասում՝ որպես հարկի գծով ծախս:
Հիմնադրամը ճանաչում է հետաձգված հարկային ակտիվների հետ կապված գնահատման պահուստ այնպես, որ զուտ հաշվեկշռային արժեքը հավասար լինի այն ամենաբարձր գումարին, որը ավելի շատ հավանական է, քան՝ ոչ, որ կփոխհատուցվի ընթացիկ կամ ապագա հարկվող շահույթի հիման վրա:

3.11. **Սխալներ**

Որքանով իրագործելի է, Հիմնադրամը որևէ նախորդ ժամանակաշրջանի էական սխալները ուղղում է հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդ ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համադրելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) վերահաշվարկելով ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները ներկայացված նախորդ ամենավաղ ժամանակաշրջանի համար, եթե սխալը տեղի է ունեցել մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը:

3.12. **Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ**

Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոփոխվում է միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝

ա) պահանջվում է ՖՀՄՍ-ներով, կամ

բ) նպաստում է տնտեսական գործունեության դեպքերի և գործառնությունների առավել ճշգրիտ ներկայացմանը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում:

Երբ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառվում է հետընթաց, Հիմնադրամը պետք է կիրառի նոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը մինչև ամենավաղ իրագործելի ամսաթիվը՝ նախորդ ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ, կարծես թե հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը ի սկզբանե կիրառվել է:

Երբ Հիմնադրամի համար անիրագործելի է որոշել ներկայացված մեկ կամ ավելի նախորդ ժամանակաշրջանների համար համադրելի տեղեկատվության վրա կոնկրետ ժամանակաշրջանին վերաբերող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության հետևանքները, Հիմնադրամն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների նկատմամբ կիրառում է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը՝ սկսած այն ամենավաղ ժամանակաշրջանի սկզբից, որը կարող է լինել ընթացիկ ժամանակաշրջանը, որի համար հետընթաց կիրառումն իրագործելի է, ինչպես նաև կատարում է այդ ժամանակաշրջանում սեփական կապիտալի այն հոդվածների սկզբնական մնացորդների համապատասխան ճշգրտումներ, որոնք ազդեցություն են կրել այդ փոփոխություններից:

3.13. **Փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում**

<u>Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխությունը</u> ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի կամ ակտիվի պարբերաբար սպառվող մեծության ճշգրտումն է, որն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ընթացիկ վիճակի և դրանց հետ կապված ակնկալվող ապագա օգուտների և պարտականությունների գնահատումից: Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններն առաջանում են նոր տեղեկատվության ստացման կամ նոր հանգամանքների առաջացման հետևանքով և, հետևաբար, չեն համարվում սխալների ուղղում:

<u>Հետևանքի ճանաչման ժամանակաշրջանը</u>

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը ճանաչում է առաջընթաց՝ շահույթի կամ վնասի որոշման մեջ.

ա) փոփոխման ժամանակաշրջանում՝ եթե փոփոխությունն ազդում է միայն հաշվետու ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է երկուսի վրա էլ:

Բացառություն է կազմում հաշվապահական հաշվառման գնահատման որևէ փոփոխություն, որն առաջացնում է փոփոխություններ ակտիվներում և պարտավորություններում, կամ վերաբերում է սեփական կապիտալի որևէ հոդվածի, որի դեպքում Հիմնադրամը այն ճանաչում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն:

3.14. **Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր**

Հիմնադրամը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Հիմնադրամը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Համարգչային տեխնիկա և սարքավորումներ	Մեքենաներ, սարքավորումներ,	Տրանսպորտային միջոցներ	Արտադրատնտեսական գույք	Շենքերի վրա կապիտալ ծախսեր	Ընդամենը
Արժեք						
Առ 1 հունվարի 2023թ.	3,418	188,249	7,850	28,879	9,683	
Ավելացումներ	59	8,406		2,602		11,067
Նվազեցումներ	(50)	(7,445)				(7,495)
Վերադասակարգումներ						-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	3,427	189,210	7,850	31,481	9,683	241,651
Ավելացումներ	1,418	105		3,040	637	5,200
Նվազեցումներ	(28,780)	(7,048)		(5,040)	(3,940)	(44,808)
Վերադասակարգումներ	92,982	(92,872)		(110)		-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	69,047	89,395	7,850	29,371	6,380	202,043
Կուտակված մաշվածություն						
Առ 1 հունվարի 2023թ.	2,871	183,737	7,850	23,595	7,796	225,849
Մաշվածության գումար	132	6,093		1,453	969	8,647
Նվազեցումներ	(50)	(7,332)				(7,382)
Վերադասակարգումներ						-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	2,953	182,498	7,850	25,048	8,765	227,114
Մաշվածության գումար	6,306	479		2,192	563	9,540
Նվազեցումներ	(28,755)	(7,352)		(4,616)	(3,726)	(44,449)
Վերադասակարգումներ	87,378	(87,498)		120		-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	67,882	88,127	7,850	22,744	5,602	192,205
Ընթացիկ արժեք						
Առ 1 հունվարի 2023թ.	547	4,512	-	5,284	1,887	12,230
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	474	6,712	-	6,433	918	14,537
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	1,165	1,268	-	6,627	778	9,838

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի գրավադրված հիմնական միջոցներ
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 180,865 հազ. ՀՀ դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվել են զրո հաշվեկշռային արժեքով (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 212,339 հազ. ՀՀ դրամ)

5. Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ

	Համարգչային ծրագրեր	Ինտերնետային կայք	Այլ	Ընդամենը
Արժեք				
Առ 1 հունվարի 2023թ.	96,663		998	
Ավելացումներ				-
Նվազեցումներ	(3,641)			(3,641)
Վերադասակարգումներ				-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	93,022	-	998	94,020
Ավելացումներ		4,000		4,000
Նվազեցումներ			(998)	(998)
Վերադասակարգումներ				-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	93,022	4,000	-	97,022
Կուտակված մաշվածություն				
Առ 1 հունվարի 2023թ.	68,504		2	68,506
Մաշվածության գումար	9,159		199	9,358
Նվազեցումներ	(3,641)			(3,641)
Վերադասակարգումներ				-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	74,022	-	201	74,223
Մաշվածության գումար	9,092	112	199	9,403
Նվազեցումներ	61		(400)	(339)
Վերադասակարգումներ				-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	83,175	112	-	83,287
Ընթացիկ արժեք				
Առ 1 հունվարի 2023թ.	28,159	-	996	29,155
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	19,000	-	797	19,797
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	9,847	3,888	-	13,735

Համակարգչային ծրագրերը ներառում են վեբինարների, խմբային ինտերնետային համաժողովների և աուդիո քննարկումների, այդ թվում հեռահար ուսուցման կազմակերպման համար մշակված հարթակը (հեռահար հարթակ), որը 2016թ.-ին ստացվել է որպես շնորհ 90,917 հազ. ՀՀ դրամ իրական պայանագրային գնով:

6. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ

	31.12.2024թ.	31.12.2023թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր	5,349	509
Դեբիտորական պարտքերի պահուստ	(2,015)	(442)
Տրված կանխավճարներ	134	137
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	2,721	2,462
Այլ դեբիտորական պարտքեր	560	335
	6,749	3,001

7. Ընթացիկ ֆին. ներդրումներ

Հազար դրամ

	31.12.2024թ.	31.12.2023թ.
Ավանդներ	32,516	37,953
	32,516	37,953
Մայր գումար	30,000	35,000
Հաշվեգրված տոկոսներ	2,516	2,953
	32,516	37,953

31.12.2024թ. դրությամբ ավանդները ներդրված են Ինեկոբանկ ՓԲԸ-ում տարեկան 8.9% տոկոսադրույքով

8. Դրամական միջոցներ

Հազար դրամ

	31.12.2024թ.	31.12.2023թ.
Մնացորդ դրամարկղում	9	9
Ընթացիկ հաշիվներ բանկերում	9,968	1,793
	9,977	1,802

9. Հետաձգված եկամուտ

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	18,933	28,033
Տարվա ընթացքում ստացված	-	-
Տարվա ընթացքում եկամուտ ճանաչված	(9,084)	(9,100)
Տարեվերջի մնացորդ	9,849	18,933

Հետաձգված եկամուտը ներառում է որպես շնորհ ստացված ոչ նյութական ակտիվի՝ հեռահար հարթակի հաշվեկշռային արժեքը:

10. Հետաձգված հարկային պարտավորություններ

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Տարեսկզբի մնացորդ	(8,905)	(6,516)
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս)/փոխհատուցում	(1,258)	(2,389)
Տարեվերջի մնացորդ	(10,163)	(8,905)

Հազար դրամ

	01.01.2024	Ֆին. արդյունքում ճանաչված	31.12.2024
Հետաձգված հարկային ակտիվ			
Անավարտ ծառայություն	745	377	1,122
Չօգտագործված արձակուրդայինի պահուստ	858	871	1,729
Հարկային վնաս	2,132	(964)	1,168
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	3,735	284	4,019
Հետաձգված հարկային պարտավորություն			
Ուսման վարձերի գծով հարկային առումով դեռևս չճանաչված հասույթ	12,640	1,542	14,181
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	12,640	1,542	14,181
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(8,905)	(1,258)	(10,162)

Հազար դրամ

	01.01.2023	Ֆին. արդյունքում ճանաչված	31.12.2023
Հետաձգված հարկային ակտիվ			
Անավարտ ծառայություն	983	(238)	745
Հիմնական միջոցներ և այլ ոչ ընթացիկ ակտիվներ	8	(8)	-
Չօգտագործված արձակուրդայինի պահուստ	771	87	858
Հարկային վնաս		2,132	2,132
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	1,762	(159)	3,735
Հետաձգված հարկային պարտավորություն			
Ուսման վարձերի գծով հարկային առումով դեռևս չճանաչված հասույթ	8,278	4,362	12,640
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	8,278	4,362	12,640
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(6,516)	(4,521)	(8,905)

11. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ

	31.12.2024թ.	31.12.2023թ.
Հարկերի գծով	3,626	2,423
Ստացված կանխավճարներ	54,832	41,774
Դեռևս չառաջացած ԱԱՀ	15,757	13,320
Պարտքեր աշխատակիցներին	6	94
Առևտրային կրեդիտորական պարտքեր	796	654
Ընթացիկ պահուստ արձակուրդայինների գծով	9,606	4,767
Այլ պարտքեր	100	150
	84,723	63,182

12. Հասույթ

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Ուսման վարձերից եկամուտ	159,067	118,286
Ուսման վարձերի գծով հասույթի ճշգրտում ըստ ավարտվածության աստիճանի	12,182	24,230
Քննության մասնակցության վճար	15,041	12,708
Այլ ուսումնական ծառայություններ	2,000	677
	188,290	155,901

13. Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	100,809	90,031
	100,809	90,031
Աշխատավարձ	77,614	72,516
ՀՄ մաշվածություն	7,416	4,510
Այլ	15,779	13,005

14. Այլ եկամուտ

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Ջեռուցման ծախսի փոխհատուցումից եկամուտ	470	364
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	9,092	9,100
Այլ	199	120
	9,761	9,584

15. Իրացման ծախսեր

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
ՀՄ մաշվածություն	9,092	9,094
Մարկետինգի և գովազդի ծախսեր	5,170	4,485
Այլ ծախսեր	-	-
	14,262	13,579

16. Վարչական ծախսեր

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Աշխատանքի վարձատրության գծով ծախսեր	65,118	50,797
Արձակուրդի պահուստի ծախսեր	4,839	485
ՀՄ մաշվածություն գծով ծախսեր	2,134	4,402
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	8,092	4,625
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	980	1,122
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	6,182	6,542
Բանկային և ապահովագրական ծախսեր	254	354
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	580	600
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	591	1,048
Այլ ծախսեր	4,728	10,152
	93,498	80,127

17. Այլ ծախսեր

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Դեբիտորական պարտքերի դուրս գրում	1,850	-
Անհատույց տրված ակտիվներ	5,574	1,320
Տույժեր	305	-
Այլ ծախսեր	682	469
	8,411	1,789

18. Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում

Հազար դրամ

	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկ	-	-
Հետաձգված հարկ	1,258	2,389
	1,258	2,389

19. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունը

19.1 Շուկայական ռիսկ

Արժութային ռիսկն

Արժութային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով:

Հիմնադրամը ունի արտարժույթով գնանշված հետևյալ ֆինանսական գործիքները

RUB

Ֆինանսական ակտիվներ	**2024թ.**	**2023թ.**
Դրամական միջոցներ	3	3

Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքային ռիսկը այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխության հետևանքով: Հաշվետու ամսաթվով Հիմնադրամը չունի ստացված կամ տրված փոխառություններ, կամ այլ ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ, որոնք հակված են տոկոսադրույքային ռիսկի:

Այլ գնային ռիսկ

Գնային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական գների փոփոխության արդյունքում (բացի տոկոսադրույքային ռիսկից և արժութային ռիսկից առաջացողներից): Ղեկավարությունը գնահատում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում նրանց հաշվեկշռային արժեքից:

19.2 **Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկը այն ռիսկն է, դեբիտոր գործընկերների կողմից Հիմնադրամի նկատմամբ իրենց պարտավորությունների չկատարելու արդյունքում, Հիմնադրամը կարող է կրել ֆինանսական կորուստներ: Պարտքային ռիսկը առաջանում է բանկային մնացորդներից, առևտրային դեբիտորական պարտքերից: Հիմնադրամը լրիվ պահուստավորում է բոլոր այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնց մարման ժամկետից անցել է ավելի քան 365 օր:

19.3 **Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, երբ Հիմնադրամը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են՝ դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով Հիմնադրամը պատրաստում է դրամական հոսքերի տարեկան նախահաշիվներ:

20. **Հաշվապահական կարևոր դատողությունները և գնահատման անորոշության հիմնական աղբյուրները**

Սույն ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Հիմնադրամի ղեկավարությունը կատարել է մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Գնահատումները և ենթադրությունները վերանայվում են շարունակաբար:

21. **Պայմանական դեպքեր և պարտավորվածություններ**

21.1 **Դատական վեճեր**

Հաշվետու ամսաթվի դրությամբ, ինչպես նաև, մինչև այս հաշվետվության հաստատման ամսաթիվը Հիմնադրամը ներգրավված չէ դատական գործերում և հայցերում:

21.2 **Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ**

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր մեկնաբանությունների առարկա են:

Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները:

21.3 **Ապահովագրություն**

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրական շատ ձևեր դեռ հասանելի չեն: Հիմնադրամը ապահովագրված չէ գործունեության ընդհատման կամ էական կրճատման, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված գույքային, բնապահպանական կամ առողջության վնասների հետ հնարավոր միջադեպերի արդյունքում, բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով առաջացած վնասների: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

21.4. **Երաշխիքներ**

Չկան Հիմնադրամի կողմից տրամադրված և (կամ) ստացված երաշխիքներ:

22**. Կապակցված կողմերի բացահայտում**

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են հիմնադիրը՝ ՀՀ փաստաբանների պալատը, հոգաբարձուների խորհրդի անդամները և առանցքային ղեկավար անձնակազմը:

22.1. **Գործարքներ կապակցված կողմերի հետ**

Հաշվետու տարվա ընթացքում հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները.

	2024թ.	**2023թ.**
Ջեռուցման ծախսի փոխհատուցում (ՀՀ փաստաբանների պալատ)	470	364

22.2 **Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումներ**

Հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամի առանցքային կառավարչական անձնակազմին տրված հատուցումները հետևյալն են.

	2024թ.	**2023թ.**
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ (Հիմնադրամի ռեկտոր)	10,538	9,928

23. **Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում**

2024թ. ընթացքում Հիմնադրամը նախորդ տարիներին վերաբերող սխալներ գտնելու արդյունքում որոշել է վերաներկայացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն ՓՄԿ ՖՀՄՍ-ների Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, գնահատումներ և սխալներ բաժնի: Վերոնշյալի արդյունքում, Հիմնադրամի ղեկավարությունը որոշել է համապատասխան ճշգրտումներ կատարել ֆինանսական հաշվետվություններում, որոնք կիրառվել են հետընթաց՝ հիմնվելով Հիմնադրամի որդեգրած քաղաքականության վրա:

23.1.**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերաներկայացված ֆինանսական հաշվետվությունների համադրումը ներկայացված է ստորև

	Համաձայն նախորդ հաշվետվության	Ճշգրտում	Ճշգրտված մնացորդ
	հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	14,537	-	14,537
Ոչ նյութական ակտիվներ	19,797	-	19,797
	34,334		34,334
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10,765	(7,764)	3,001
Առևտրային դեբիտորական պարտքեր	3,173	(2,664)	509
Տրված կանխավճարներ	4,555	(4,418)	137
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	3,144	(682)	2,462
Ընթացիկ ֆին. ներդրումներ	35,000	2,953	37,953
Հաշվեգրված տոկոսներ	-	2,953	2,953
Դրամական միջոցներ	1,802		1,802
	47,567		42,756
	81,901		77,090
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Կուտակված արդյունք	(16,165)	2,235	(13,930)
	(16,165)		(13,930)
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	18,933	-	18,933
Հետաձգված հարկային պարտավորություններ	8,905	-	8,905
	27,838		27,838
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	70,228	(7,046)	63,182
Ստացված կանխավճարներ	62,140	(20,366)	41,774
Դեռևս չառաջացած ԱԱՀ	-	13,320	13,320
Շահութահարկի գծով պարտավորություն	-	-	-
	70,228		63,182

Սխալները թույլ են տրվել թվաբանական սխալի, անուշադրության հետևանքով, հնարավորինս բացահայտվել է դրանց ազդեցությունը ֆինանսական արդյունքի վրա:

23.1. **Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերաներկայացված ֆինանսական հաշվետվությունների համադրումը ներկայացված է ստորև

	Ծնթ.	**2023թ. համաձայն նախորդ հաշվետվության**	**Ճշգրտում**	**2023թ. ճշգրտված**
		հազար դրամ	հազար դրամ	հազար դրամ
Հասույթ	12	154,971	930	155,901
Վաճառքի ինքնարժեք	13	(31,586)	(58,445)	(90,031)
Համախառն շահույթ		123,385		65,870
Այլ եկամուտ	14	9,464	120	9,584
Իրացման ծախսեր	15	(14,064)	485	(13,579)
Վարչական ծախսեր	16	(136,917)	56,660	(80,257)
Այլ ծախսեր	17	(1,437)	(352)	(1,789)
Այլ ոչ գործառնական օգուտ/(վնաս), զուտ		-	(249)	(249)
Ֆինանսական եկամուտ		2,961	-	2,961
Շահույթ մինչև հարկումը		(16,608)		(17,459)
Շահութահարկի գծով ծախս		(2,389)		(2,389)
Տարվա զուտ շահույթ		(18,997)		(19,848)
Այլ համապարփակ եկամուտներ				
Տարվա համապարփակ արդյունք		(18,997)		(19,848)

Համադրելիության ապահովման նպատակով 2023թ. 58,445 հազար դրամ վարչական ծախս վերաներկայացվել է որպես վաճառքի ինքնարժեք (աշխատավարձի գծով ծախս 40,930 հազար ՀՀ դրամ):

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 24.06.2025 11:09